ԳԼՈՒԽ ԺԷ .

Արշաւանք Խաչակրաց յարեւելս : Պատերազմ նոցա 'ի կողմանս Բիւթանիոյ : Պաշարումն Անտիոքայ և առումն նորին : Տիրել նոցին Ռուհայի , Բեթղեհեմի : Պաշարել զԵրուսաղէմ և առնուլ զայն : Կոտորումն այլազգեաց : Գոդֆրոյ վկայասէր :

Յետ այնչափ աննշմարին աղէտից , սոսկալի կոտորածոց և մոլեգին արիւնհեղութեանց , ապառում և դժնդակ գերութեանց և յափշտակութեանց , զորս գործեցին յարեւելս եւ յաշխարհին Պաղեստինոյ ընդդէմ քրիստոնէից այլ և այլ իշխանական ցեղք Հագարացւոց . հուսկ ուրեմն հայեցաւ Տէր 'ի ժողովուրդս իւր , և զարթոյց զմիտս քրիստոնէիցն Եւրոպիոյ փրկել զնոսա 'ի ձեռաց նեղչացն :

Վասն այսորիկ կազմեցաւ միաբանութիւն ինչ հոգեւոր յարեւմուտս 'ի մէջ Լատինացւոց յորդորանօք Ուրբանոսի Բ . հայրապետին Հռոմայ , և քարոզութեամբ Պետրոսի ուրումն մեծի միայնակեցի՝ վասն ազատութեան Ս . Երկրին եւ բովանդակ սահմանաց նորին 'ի ձեռաց այլազգեաց : Եւ միաբանութիւն նոցա կոչեցաւ Խաչակրաց , զի որք միանգամ մտանէին 'ի համար նոցա , կրէին յաջոյ ուսս իւրեանց զկարմրերանգ նշան Ս . Խաչին (1095) : Ապա 'ի մի վայր եկեալ ժողովեցան բազմութիւնք յոյժ քրիստոնէից յԻտալիոյ , 'ի Գաղղիոյ , 'ի Սպանիոյ , 'ի Գերմանիոյ եւ յայլ կողմանց Եւրոպիոյ , զորս 'ի հասարակի կոչեմք Լատինս կամ Խաչակիրս , որոց ամենեցուն գլուխ և զօրավար եկաց իշխանն քաջազօր Կոնդոպրէ , ընդ նմա էին Բալտովին կամ Բեաուէն եւ Եւստաքէոս հարազատք նորին . Տանկրէտ և Ռէյմօնտ կոմսքն Ֆլանտրիոյ և Նորմանտիոյ . Սինկեղ և միւս Պալտովին , և այլք :

Պետրոս միայնակեացն երթայր յառաջոյ Ասպետացս գաւազանաւ ուխտաւորութեան իւրոյ : Էին ընդ նոսա և բազմաթիւ եպիսկոպոսունք , քահանայք և պաշտօնեայք եկեղեցւոյ . եւ ճանապարհ արարեալ ահագին բազմութեամբ խաղացին ընդ Արեւելս . անցեալ յաշխարհն Հունգարիոյ և Պուլղարիոյ հասին 'ի դրունս Կոստանդինուպօլսի :